«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ
2019թ. համար

Բ ովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	8
Հիմնադրամի միջոցների մնացորդում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Վեբ կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, Հիմնադրամի միջոցների մնացորդում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկային վերաբերող մեր պարտականություններն այս պահանջներին և էթիկայի միջազգային կանոնագրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհարժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե առկա չէ ղեկավարության՝ Հիմնադրամը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Մենք նաև՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու համար և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ հանգամանքները հետ կապված, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել

ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները բավարա չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Հիմնադրամի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

– գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձություններն այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-էմ-Զի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

KPMG Armenia LLC
«Քեյ-Փի-էմ-Զի Արմենիա» ՍՊԸ
29 հունիսի 2020թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն առ 31 դեկտեմբերի 2019թ.

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	76,036	24,060
Ավանդներ բանկերում		71,477	53,295
Տրված փոխառություններ	7	131,776	142,189
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	8	31,513	40,063
Պաշարներ		11,941	9,018
Ընթացիկ ակտիվներ		**322,743**	**268,625**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	9	3,553,310	3,645,155
Հետաձգված հարկային ակտիվներ	16	14,387	13,328
Ոչ ընթացիկ ակտիվներ		**3,567,697**	**3,658,483**
Ընդամենը ակտիվներ		**3,890,440**	**3,927,108**
Պարտավորություններ և Հիմնադրամի միջոցների մնացորդ			
Հետաձգված հասույթ ուսման վարձերի գծով		188,445	156,830
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	10	70,685	55,800
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	74,426	66,864
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	140,738	139,582
Ընթացիկ պարտավորություններ		**474,294**	**419,076**
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	3,404,511	3,497,456
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**3,404,511**	**3,497,456**
Ընդամենը պարտավորություններ		**3,878,805**	**3,916,532**
Կուտակված ավելցուկ		11,635	10,576
Հիմնադրամի միջոցների մնացորդ		**11,635**	**10,576**
Ընդամենը պարտավորություններ և Հիմնադրամի միջոցների մնացորդ		**3,890,440**	**3,927,108**

* Հիմնադրամը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է կուտակված ավելցուկում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 5):

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 2019թ. համար

հազ. դրամ	Ծնթգ.	2019թ.	2018թ.
Հասույթ	13	903,096	837,470
Եկամուտ նվիրատվություններից	14	357,684	260,907
Այլ եկամուտ		1,926	4,619
		1,262,706	**1,102,996**
Անձնակազմի գծով ծախսեր		(778,436)	(659,637)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախս		(140,738)	(139,585)
Այլ ծախսեր	15	(348,778)	(310,334)
Գործառնական գործունեության արդյունքներ		**(5,246)**	**(6,560)**
Զուտ ֆինանսական եկամուտ		5,246	6,560
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		-	-
Շահութահարկի գծով հատուցում/(ծախս)	16	1,059	2,442
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		**1,059**	**2,442**

* Հիմնադրամը սկսել է կիրառել ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ից՝ օգտագործելով փոփոխված հետընթաց մոտեցումը: Այս մոտեցման համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվում և ՖՀՄՍ 16-ը սկզբնապես կիրառելու կուտակային հետևանքը ճանաչվում է չբաշխված շահույթում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ (տես Ծանոթագրություն 5):

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020թ. հունիսի 29-ին -ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Digitally signed by PAKHCHANYAN ARAM 1104680823
Date: 2020.06.29 19:24:26 +04'00'

Արամ Փախչանյան
Գործադիր տնօրեն

Արմինե Հովհաննիսյան
Գլխավոր հաշվապահ

ՀԻՄՆԱԴՐԱՄ ՖՈՆԴ FOUNDATION 00873862

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 10-ից 47-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ: